ԼՈՌԻ-ԲԵՐԴ ՔԱՂԱՔԸ

Միջնադարյան Հայաստանի ճարտարապետության պատմությունից

Վ. Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ

Ի. ԱՌԱՋԱՑՄԱՆ, ԿԱՌՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

X դարի վերջում, Հայաստանի Գուգարաց նահանգում, կազմավորվում է Տաշիր-Զորագետյան թագավորությունը, որը վասալային կախման մեջ էր Անիի Բագրատունիների թագավորությունից։ Սկզբում նրա կենտրոնը Սամշուլգեն էր (ներկայումս գտնվում է Վրացական ՍՍՌ-ում)։ Սակայն շուտով Տաշիր-Զորագետյան թագավորության կենտրոնում բարձրանում է Լոռէ կամ Լոռի բերդը։ Նրա կառուցումը վերագրվում է Անիի Բագրատունիների մի ճյուղի ներկայացուցիչ Դավիթ Անհողինին (989—1048), Տաշիր-Զորագետյան թագավորության հիմնադրին։ Վարդան Բարձրաբերդցին պատմելով նրա որդու Կյուրիկե II-ի (1048—1090) մասին, ասում է, որ «Սմա հայրն Դաւիթ շինեաց զԼոռի և այլ ևս երկոտասան բերդս...»[1]։

Մատենագրական վկայություններից կարելի է եզրակացնել, որ սկզբում Լոռէն կառուցվել է միայն որպես բերդ, իսկ հետո, հավանաբար XI դարի սկզբից, երբ նույն տեղում բերդի շուրջը առաջացել է քաղաքը, նրա համար արդեն Լոռէ ամրոցը սկսել է ծառայել իբրև միջնաբերդ։

Ըստ մատենագրական չափազանց սակավ տեղեկությունների, Լոռէ քաղաքը իր գոյության ընթացքում ապրել է պատմական մի շարք փուլեր։ Պետք է ենթադրել, որ հիմնական քաղաքաշինական աշխատանքներն ու քաղաքի վերելքը տեղի է ունեցել XI դարի կեսերին, այսինքն այն ժամանակ, երբ Կյուրիկե II-ի օրոք Լոռէն հռչակվում է Տաշիր-Զորագետի թագավորության մայրաքաղաք։

1105 թ. Լոռէն գրավվել է սելջուկյան էմիր Ղզլի կողմից, որից հետո նա իր զորքերը ուղղել է դեպի Դվին։ Հարևան Վրաստանի ուժեղացմամբ, 1118 թ. Դավիթ Շինարար թագավորի օրոք Լոռէն միացվում է Վրաստանին ու հանձնվում վրաց Օրբելիանի իշխաններին իբրև տիրույթ։ Իվանե Օրբելիանի իշխանի օրոք 1178 թ. կատարվել են բերդի ամրացման որոշ աշխատանքներ։

Գեորգի III-ի ու նրա դստեր՝ Թամար թագուհու արքունիքին մատուցած ծառայությունների համար Լոռէն 1186 թ. հանձնվում է ամիրսպասալար Սար-

1 «Մեծին Վարդանայ Բարձրաբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 142։

դիս Զաքարյանին, որից և հետագայում անցնում է նրա որդի Զաքարիային։ Քաղաքի նոր տերերը, որոնք պատմության մեջ հայտնի են շինարարական եռանդուն գործունեությամբ, այստեղ ևս ծավալում են նշանակալի քաղաքաշինական աշխատանքներ։ Նրանք ուժեղացնում են բերդի պաշտպանական պարիսպները, բերդի ներսում կառուցում են եկեղեցական ու քաղաքացիական շինություններ, իսկ Լոռէն շրջապատող անդնդախոր կիրճերում կառուցում են կամուրջներ։ Զաքարյանների օրոք քաղաքի աճած նշանակության մասին խոսում է ամիրսպասալար Զաքարիայի նախաձեռնությամբ Լոռէում համահայաստանյան եկեղեցական ժողով կազմակերպելու փաստը, որին ներկա են եղել հայոց եկեղեցու անվանի գործիչներ, նշանավոր վանքերի վանահայրեր, դրանց թվում՝ հայտնի Մխիթար Գոշը, Խաչատուր Տարոնեցին, Հովհաննես Սանահնեցին և ուրիշներ։

Բայց շուտով վերջանում է քաղաքի հետագա զարգացմանն ու բարեկարգմանը նպաստող խաղաղ շրջանը։ 1228 թ. Խորեզմի Շահ Ջալալեդդինի զորքերը խան Էլեկի գլխավորությամբ պաշարում ու ավերում են Լոռէի արվարձանները, սակայն խորտակել բերդի դիմադրությունը նրանց չի հաջողվում։ Տասը տարի անց՝ 1238 թ., երբ բերդը ժառանգաբար անցնում է Զաքարիայի որդուն՝ Շահնշահին, Լոռէն կրկին պաշարվում է, այս անգամ արդեն մոնղոլական Ջաղաթայ-խանի զորքերով։ Կիրակոս Գանձակեցի պատմիչը մանրամասն նկարագրում է քաղաքի առումը։ Բերում է նաև մի քանի հետաքրքիր տեղեկություններ քաղաքի ամրությունների մասին։ Ստորև բերում ենք Գանձակեցու վկայությունն ամրողջությամբ.

«Վասն առեման քաղաքին Լոռոյ։

Զօրավարն ամենայն զնդին հեթանոսաց, որում անունն էր Զափատայ, լուաւ վասն ամրութեան քաղաքին Լոռոյ և յոլովութեան գանձուցն՝ որ ի նմա. զի ի նմա էր տուն իշխանին Շահնշահի և գանձք նորա։ Առեալ ընդ իւր զընտիր սպառազէնս յոլով մեքենայիւք և ամենայն պատրաստութեամբ չոգաւ անդ և նստեալ շուրջ զնովաւ՝ պաշարեաց զնա։

Իսկ իշխանն Շահնշահ առեալ զկին իւր և զմանկունս, ել գաղտագողի ի ձոր անդր, և ամրացաւ յայրս ուրեք։ և զվերակացութիւն քաղաքին տայ ձեռս աներաց իւրոց։ Իսկ նոքա՝ քանզի արք կանացիք էին, ուտելոյ և ըմպելոյ և արբեցութեան պարապեալ, յուսալով յամրութիւն պարսպացն, և ոչ յաստուած։

Եկեալ թշնամեացն՝ փորեցին ներքոյ պարսպին և փլուցին զնա, և ինքեանք շուրջ նստեալ պահէին, զի մի ոք փախիցէ։ Իսկ բնակիչք քաղաքին իբրև տեսին, թէ առաւ քաղաքն, սկսան մղել ի փախից և ի ձոր անդր լնուին։ Եւ զայն տեսեալ թշնամեացն՝ սկսան մտանել քաղաքն և կոտորել յանխնայ զարս և զկանայս և զմանուկս՝ աւար առեալ զինչս և զստացուածս նոցա. գտանին և զգանձս իշխանին Շահնշահի, որ զրկեալ և կողոպտեալ էր զիւր հնազանդեալսն և անդ կազմեալ տուն գանձուց ամրագոյն, զոր ոչ էր հնար ումեք տեսանել, զի նեղ արարեալ էր զբերան դրին, որ միայն արկանելոյ էր բաւական, իսկ հանելոյ ոչ ևս»[2]։

Մոնղոլների գրավումից հետո Լոռէ քաղաքը երկու հարյուր տարի անընդհատ ձեռքից ձեռք էր անցնում, այդ թվում նաև վոաց Օրբելիանի իշխանական

---

2 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 253—254։

տոհմի ներկայացուցիչների։ 1430 թ. օտարազգիները հանկարծակի հարձակումով նորից գրավում են այն, սակայն երկու տարի անց, շնորհիվ վրաց թագավոր Ալեքսանդրի, քաղաքը վերադարձվում է Օրբելիանիներին։

Մինչև XVII դարի կեսերը քաղաքը շարունակում է մնալ վրացական ու պարսկական կառավարիչների ձեռքին։ XVIII դարի վերջում հնդկահայ Շահամիրը արդեն զգալիորեն լքված ու թուլացած Լոռվն ետ է առնում վրաց թագավորներից, բայց չի կարողանում վերականգնել այն ու վերարնակեցնել։

Քաղաքի ավերակների վրա հետագայում զարգանում է Լոռիբերդ գյուղը, որի բնակիչները 1925—1931 թթ. ջրամատակարարման գործի և այլ անհարմարությունների պատճառով ստիպված են լինում տեղափոխվել բերդի սահմաններից դուրս, ուրիշ տեղամաս։ Ներկայումս թե՛ բերդի, թե՛ քաղաքի տերիտորիան անմարդաբնակ է։ Լոռիբերդի կոլտնտեսությունը մասամբ օգտագործում է այն վար ու ցանքի համար։

Լոռէ կամ Լոռիբերդ քաղաքատեղին տակավին չի ենթարկվել հնագիտական լուրջ ուսումնասիրության, որն անշուշտ կտար արժեքավոր տվյալներ քաղաքի պատմության ու Տաշիր-Զորագետյան թագավորության մասին։ Թե՛ պատմական ու թե՛ դիտական աղբյուրները սակավախոս են այս քաղաքի մասին։

Ճանապարհորդներից Լոռէի մասին առաջինը հիշատակում է Վենետիկի դեսպան Ամբրոսիոս Կոպտարինին, որն այցելել է բերդը 1474 թ. հուլիսի 25-ին։ Նա ասում է, որ բերդը պատկանում էր Ուզուն Հասանին ու պաշտպանվում թուրքերի միջոցով[3]։ Մի ուրիշ ճանապարհորդ՝ Երմոլովի դեսպանության անդամ, սպա Մորից ֆոն Կոցեբուն, որ եղել է բերդում 1817 թ. ապրիլի 21-ին, ասում է, թե Լոռին հանդիսանում էր փոքր Հայաստանի մայրաքաղաքը, ուր եղել է 6 հազար տուն։ Նա հուսալի ապաստարան էր հանդիսանում թագավորների համար, և նույնիսկ մի պաշարման ժամանակ դիմադրել է ութիկ յոթը տարի։ Սպայի այցի ժամանակ այնտեղ եղել է միայն 30 տուն[4]։

Քաղաքի համառոտ նկարագիրը, համապատասխան իր ավերակ վիճակին, անցյալ դարի 40-ական թվականներին (երբ հնագիտական հուշարձանները համեմատաբար պահպանված են եղել) տվել է Ս. Ջալալյանը[5]։ Նման մի նյութ գտնում ենք Ի. Հարությունյանի թղթակցության մեջ, որը տպագրված է «Լումա» ամսագրում[6]։ Ըստ երևույթին այս երկու աղբյուրները և պատմիչների տված տեղեկություններն է օգտագործել Ս. Էփրիկյանը քաղաքի պատմության ու պահպանված ավերակների մասին իր համեմատաբար լավ, սիստեմատիկ շարադրանքի համար[7]։

Լոռի քաղաքը հիշատակվում է նաև սովետական շրջանում հրապարակված պատմական որոշ աշխատություններում։ Նրանցից մեկում բերվում է

3 «Ուղեգրություններ», հատ. I, Երևան, 1932, էջ 226։

4 Նույն տեղում, հատ. II, Երևան, 1934, էջ 515, 525—526։

5 Ս ա ր գ ի ս վ ր դ պ. Ջ ա լ ա լ յ ա ն ց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, Թիֆլիս, 1842, էջ 121—122։

6 Ի. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն, Ակակերտի հիշատակարան (տես «Լումա» 1897, գ. I, էջ 246—254)։

7 Ս. Է փ ր ի կ յ ա ն, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հատ. II, Վենետիկ, 1903, էջ 116—120։

քաղաքի համառոտ պատմությունը և փլատակների նկարագիրը°։ Հետագա ժամանակներում կատարված հետազոտությունների հիման վրա հրապարակված են աշխատություններ աշխարհիկ ճարտարապետության առանձին հուշարձանների մասին[9]։

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից ճարտարապետական գործերի վարչության, ճարտարապետական հուշարձանների պահպանման կոմիտեի պատվերով 1948 թ. կատարվել է քաղաքատեղի տեղագրական հանույթը։

Հեղինակն առաջին անգամ այցելել է Լոռիբերդ 1936 թ., կատարելով այնտեղ մի շարք ջրանկարներ։ Այնուհետև, 1947, 1953, 1956, 1961 թթ. կատարել է քաղաքատեղիի հետազոտությունը, չափագրելով ու լուսանկարելով նրա հուշարձանները, որոնք և հիմք են ծառայել ներկա ուսումնասիրության համար։

2. ՔԱՂԱՔԱՏԵՂԻԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Երբեմնի Լոռէ կամ Լոռի քաղաքի ավերակները գտնվում են Հայկական ՍՍՌ-ի Ստեփանավանի շրջանում, շրջանային կենտրոնից 7 կմ դեպի հարավ-արևելք։ Քաղաքատեղին տարածվում է մի սարահարթի վրա (ծովի մակերևույթից բարձր է 1490 մ), որը մի սրածայր հրվանդան է, հարավային, արևմտյան ու արևելյան կողմերից կտրտված զառիթափերով ու անդնդախոր կիրճերով, որոնցով հոսում են Զորագետ (հին անունը՝ Տաշրաջուր) և Միսխանա (հին անունը՝ Բովաձոր) լեռնային գետերը։

Սշված այս հրվանդանի վրա X դարում կառուցվել է Լոռէ բերդը, որը միջին դարերում հայտնի էր իր անառիկությամբ։ Դա ապահովվում էր նախ՝ տեղանքի նպաստավոր պայմաններով (շրջապատի խոր կիրճերով) և ապա հրվանդանի հյուսիսային կողմում կառուցված բացառիկ ամուր պաշտպանական պարիսպներով։

Բերդի կառուցումից հետո առաջացած քաղաքը տարածվել է վերոհիշյալ սարահարթի վրա և ընդարձակվել է դեպի հրվանդանի հյուսիսային մասը։ Այդ տերիտորիան, որ կոչվելիս է եղել «Ակ-Շահար» (Սպիտակ քաղաք), ամրացված էր պաշտպանական երկրորդ գծով, որը հեռու է առաջինից 700 մետրով։

Արտաքին պարիսպներով ամփոփված ամբողջ տերիտորիայի մեծությունը կազմում է 34 հեկտար։ Սրա մեջ է մտնում նաև միջնաբերդը՝ մոտ 9,0 հեկտար մակերեսով։ Սակայն քաղաքի ընդհանուր տերիտորիան չէր սահմանափակվում վերը նշվածով։ Իր հետագա զարգացման ընթացքում՝ XII—XIII դդ. հրվանդանին հարևան հարավ-արևմտյան ու արևելյան սարահարթերում, որոնք անջատված են իրարից Զորագետ—Միսխանա գետերի կիրճերով, առաջանում են քաղաքի արվարձանները։ Այս նոր թաղամասերը լուն քաղաքի հետ կապելու համար էլ, հավանաբար, առաջացել է կիրճերում հոսող գետի վրա կամուրջներ ձգելու անհրաժեշտությունը։

° Բ. Ա ռ ա ք ե լ յ ա ն, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում, Երևան, 1958, էջ 82—83։

9 Վ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն, Միջնադարյան Հայաստանի բարավանատներն ու կամուրջները, Երևան, 1960, էջ 93—96, О. Х. Халпахчьян. Средневековые бани Армении, «Советская археология», 1960, № 1.

Զորագետի կիրճի աջափնյա սարահարթի վրա (ուր ներկայումս գտնվում է Կիրով գյուղը) եղել է «Ամրակից» արվարձանը, իսկ Միխանայի կիրճի ձախափնյա սարահարթի վրա՝ «Կենտակեղ» թաղամասը։ Միջին դարերում այդ տերիտորիաների բնակեցված լինելը հավաստվում է եկեղեցական և աշխարհիկ հուշարձանների պահպանված մնացորդներով։ Այսպիսով, Լոռէի բնակեցված մակերեսը, ներառյալ հիշյալ թաղամասերն ու արվարձանները, ընդհանուր առմամբ կազմում էր մինչև 100 հեկտար, որի վրա, ըստ միջնադարի խիտ բնակեցման պայմանների, կարող էր ապրել մոտ 8—10 հազար բնակիչ։ Վերը բերված ցուցանիշները բնութագրում են Լոռէն իբրև միջին մեծության քաղաք։



Նկ. 1. Քաղաքատեղի պլան. հատակագիծը

Լոռէ քաղաքն իր հիմնական տերիտորիայի ընդհանուր ձևով, տեղանքի բնական պայմաններով, միջնաբերդի ու քաղաքի կապով և պաշտպանական կառուցվածքների իր սիստեմով հիշեցնում է հայ Բագրատունիների մայրաքաղաք Անին, կարծես նրա փոքրիկ երկվորյակը լինի։

3. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ

Պաշտպանական տեսակետից քաղաքի հոսալիությունը, ինչպես արդեն ասացինք, ապահովված էր երկու հիմնական, իրար լրացնող միջոցներով՝ տեղանքի բնական ու բացառիկ բարենպաստ պայմաններով և պաշտպանա-

կան կառուցումների մի ամբողջ սիստեմով։ Վերջինս ներկայացրել է կառուցվածքների երկու հիմնական գիծ՝ արտաքին ու ներքին, նաև մի շարք լրացուցիչ ամրություններ, որ կառուցված էին կիրճերում՝ ներթափանցման համար մատչելի տեղերում։

Արտաքին գիծը ներկայացրել է մի պարիսպ 440 մ ընդհանուր երկարությամբ, ձգված հարթավայրի վրա, Միսխանայի ու Զորագետի կիրճերի միջև։ Այդ պարիսպը չի պահպանվել։ Ըստ երևույթին տեղի բնակիչները նրա քարերը օգտագործել են իրենց շինարարական պետքերի համար։ Այժմ նրա տեղում ամբողջ երկարությամբ մնացել է միայն մի թումբ՝ 5—6 մ լայնությամբ։ Այս պարսպով քաղաքի կենտրոնական մասը՝ «Ադ-Շահարը» պաշտպանվում էր հյուսիսային կողմի հարթավայրից։ Դատելով պահպանված մնացորդներով, այս պարիսպը բավականաչափ հզոր չէր։

Ավելի հզոր ու հուսալի էր պաշտպանական կառուցումների երկրորդ գիծը, որով անջատվում էին իրարից բերդը և «Ադ-Շահարը»։ Սա նույնպես ձգված է եղել երկու կիրճերի միջև, ընդհուպ մոտենալով նրանց եզրերին։ Նրա ընդհանուր երկարությունը կազմում էր 214 մետր[10], իսկ ինչ վերաբերում է հաստությանը, ապա այն տարբեր հատվածներում տարբեր էր։ Արևմտյան կեսում պարսպի ընդհանուր թանձրությունը հասնում է մինչև 22 մետրի։ Սա, իհարկե, արդյունք է պարսպի բազմակի ուժեղացման ու ամրացման, որ կատարել են կրկնակառուցումներով, պարսպի թե՛ ներսից, թե՛ դրսից ավելացնելով լրացուցիչ շարքեր։ Տեղում նկատվում են իրար կցած երեք, իսկ առանձին դեպքերում՝ նույնիսկ չորս շարք պատեր։ Այստեղ արված հիմնական վերանորոգումները ազատագել են պարիսպների արտաքին գծագրությունը։ Դրանով էլ պիտի բացատրել այն հանգամանքը, որ արևմտյան մասում բացակայում են հատակագծում եղած կլոր և ուղղանկյուն աշտարակները, որոնք մնացել են արևելյան մասում, ուր և պարիսպը հիմնականում պահպանել է իր նախկին չափերը, ինչպես և ներքին ու արտաքին գծագրությունը։ Այստեղ պարսպի լայնությունը չի գերազանցում 7—8 մետրից (չհաշված խիստ առաջ եկած վեց աշտարակների հաստությունը)։ Հատակագծում ուղղանկյուն ու կիսակլոր աշտարակները, որ վերևում ավարտվում էին պատնեշներով, ունեին զգալի բարձրություն (ներկա վիճակում մինչև 16 մետր) համեմատած այն պատերի հետ, որոնց արանքում նրանք գտնվել են։ Հիշյալ աշտարակները լավ միջոցներ էին պարիսպի պաշտպանության համար։

Բերդի միակ մուտքը (բաղկացած ներքին ու արտաքին դարպասներից) կառուցված էր պաշտպանական պարիսպների արևելյան ծայրում, Միսխանայի կիրճից ոչ հեռու։ Արտաքին դուռը, որ գտնվում էր ձախից՝ կիսակլոր աշտարակի և թեք պատի միջև, համեմատաբար նեղ էր ընկած պարիսպի արտաքին գծից և պաշտպանական տեսակետից նպաստավոր դիրք ուներ։ Բերդը թափանցելու համար, թշնամին պիտի խորտակեր արտաքին դարպասը, անցներ ոչ մեծ, նեղ ու ծուռ միջանցքով, որը սեղմված էր երկու պատի արանքում, ապա մոտենալով ներքին դարպասին, պիտի ձեռնարկեր նրա խորտակումը։ Միջնադարում հաճախ կիրառվող ֆորտիֆիկացիոն այս միջոցը շատ

10 Ս. Ջալալյանցի (207 մ) և Ս. Էփրիկյանի (213,1 մ) ավյալները հիմնականում համընկնում են անդրադարձան հանույթի ավյալներին։

հուսալի էր քաղաքի ու բերդի մուտքերի պաշտպանության համար։ Նկարագրված մուտքի հանգույցից ներկայումս պահպանվել է միայն արտաքին դարպասի կամարային բացվածքը 4,01 մ լայնությամբ և 4,25 մ բարձրությամբ, իսկ այն քարերը, որոնց վրա ամրացված են եղել բերդի դռների հոդերը՝ չկան։ Ծուռ միջանցքի եռանի ու ներքին դռների պատերից պահպանվել են աննշան մնացորդներ։



Նկ. 2. Բերդի պարիսպների տեսքը

Բերդի պարիսպը, թեև պահպանվել է իր ամբողջ երկարությամբ (բացառությամբ, գուցե, Զորագետի կիրճի եզրի մասից), իսկ բարձրությունը առանձին տեղերում հասնում է 20 մետրի, զգալիորեն ավերված է ու չկան այժմ մի շարք հուշարձաններ, որ հիշատակվում են գրականության մեջ։ Օրինակ՝ արտաքին աշտարակներից մեկի վրա եղել է մի մատուռ, կամ գուցե փոքրիկ եկեղեցի, որի փլատակների մասին հիշատակում է Ս. Էփրիկյանը։ Նա հիշատակում է նաև բերդապարսպի արևելյան ծայրում գոյություն ունեցող ոչ մեծ՝ հատակագծում քառակուսի և թաղով ծածկված մի շինության մասին, որ կառուցված էր սրբատաշ քարից ու պահպանվել էր պոկոտած արտաքին երեսապատով։ Այստեղ եղել են երեք թաղակապ խորաններ, որոնք ըստ ավանդության, Լոռէ բերդի կառուցողի՝ Դավիթ Անհողին թագավորի տիկնոջ դամբարանն էին ներկայացնում։ Մուտքից աջ եղել է 1251 թ. հայկական մի արձանագրություն։ Ս. Ջալալյանցը բերում է խաչքարի վրա փորագրված մի ուրիշ հայկական արձանագրություն, որում հիշատակվում են Ամրատ Բաշկենցու, Սիլարի ու Շահնշահի (Զաքարիայի որդու) անունները։ Գրության թվականն է՝ 1231։

Բերդապատերը կառուցված են բազալտի անմշակ ու կիսամշակ քարերից, որոնք իրար հետ կապված են կրաշաղախով։ Պատերի առանձին հատվածքներում նկատվում են իրարից մեկուսացված ոչ մեծ դատարկություններ, որ ըստ երևույթին թողնված են եղել շարվածքի ծավալը պակասեցնելու և շինությունը տնտեսելու նպատակներով։ Սեյսմիկ ուժերի նկատմամբ կայունությունը ապա-

հովելու համար պատերի մեջ դրված է փայտե կմախք. այն հիմնականում բաղկացած է հորիզոնական շարքով շորսու գերաններից՝ ապուցված պատի արտաքին երկու շերտերում։ Սրանք իրար են կապված պատի ամբողջ հաստությամբ դրված լայնական շորսուներով։

Նկ. 3. Բերդի մուտքը



Նկ. 4. Բուրգ գաղտնուղու վերջում

Բերդն անառիկ դարձնող չափազանց էֆեկտավոր միջոց, լրացուցիչ խոչընդոտ էր հանդիսանում պարիսպների արտաքին կողմից ու համաբյա նրանց ամբողջ երկարությամբ փորված խանդակը։ Սրա ընդհանուր երկարությունն է մոտ 170 մ, լայնությունը՝ 8—10 մետր, իսկ խորությունը՝ 3—4 մետր։ Ներկայումս խանդակը մասամբ լցված է պատերից թափված քարերով ու որոշ չափով փոխել է իր նախկին չափերը։ Խանդակը լցվում էր ջրով, որը հոսում էր ստորերկրյա մի ջրանցքով։ Սրա հետքերը այժմ էլ երևում են «Ադ-Շահարի» տերիտորիայի վրա։ Խանդակում ջրի անհրաժեշտ մակարդակը պահպանելու համար, ամենայն հավանականությամբ, Զորագետի կիրճի եզրին կառուցված է եղել պատվար, որն այժմ չի պահպանվել։

Եթե պաշտպանական պարիսպների հզոր գիծը անառիկ էր դարձնում բերդը «Ադ-Շահարի» կողմից, ապա մի շարք մասեր ամրություններ խոչընդոտում էին թշնամու թափանցումը բերդ՝ կիրճերի կողմից։ Նրանք կառուցված են այն տեղերում, ուր լանջերը մատչելի էին հակառակորդի համար։ Այսպիսի լրացուցիչ կառուցվածքներ կան Մխիթարայի կիրճի զառիթափի վրա, բերդապարապից ցած, նաև Հրվանդանի հարավ-արևելյան ստորոտի վրա, եռանկյունաձև Հրվանդանի ծայրին, ուր երկու կիրճերը իրար են միանում։ Վերջիններիս դերն առանձնապես կարևոր էր, քանի որ ապահովվում էր դեպի Մխիթարայի կիրճն իջնող այն գաղտնուղին, որ կոչվում էր «Զրդոդի ճամփա»։ Այս կապակցությամբ հիշենք Կիրակոս Գանձակեցու վկայությունն այն մասը, որում

տալիս է, թե մոնղոլների կողմից Լոռին պաշարելու ժամանակ Շահնշահը յուր կնոջ և զավակների հետ «...ել դաղտագողի ի ձոր անդր»։ Դաղտնուղին իջնում էր բերդից սկզբում կածանով, հետո՝ ստորերկրյա մի միջանցքով։ Միջանցքի ելքերը ամուր փակվում էր քարե դռնով (չափերը՝ 1,5×0,9 մ), որն այժմ էլ ընկած է իր տեղում։ Սրա երեսի կողմը փորագրված է և մեջտեղում թողնված է կլոր մի անցք (ամենայն հավանականությամբ մուտքին մոտեցողին տեսնելու, ինչպես և լուսավորության համար)։ Միջանցքը կառուցված էր ուղղահայաց դրված քարերից, իսկ վերևից ծածկված էր քարե մեծ սալերով։ Ստորերկրյա միջանցքի բարձրությունը մարդահասակ էր, լայնությունը՝ 1,0—1,2 մ. պահպանվել է մասամբ· լավ նկատելի են նրա հետքերը, որոնք թեք և ոլորապտույտ իջնում են դժվարին տեղանքով, հասնելով հատակագծում մի քիչ երկարավուն, կլոր աշտարակին, որ կառուցված է Միսխանայի կիրճում։ Այս աշտարակը կպած է ժայռերին ու բաղկացած է երկու բաժանմունքից՝ ուղղանկյուն սենյակից, ուր հասնում էր դաղանուղու միջանցքը, և հատակագծում կլոր սենյակից, որի արտաքին պատի մեջ, դեպի հյուսիս թողնված է մի ոչ մեծ ճեղք՝ ելք դեպի դուրս։ Կլոր սենյակի ներքին տրամագիծը կազմում է 4,4 մետր, պատերի հաստությունը՝ 2 մետր։ Աշտարակի պահպանված բարձրությունն է 9,5 մետր։ Նրա ներսում, երկու տեղում, միմյանցից 1,5 մետր բարձրությամբ արված են քարե լայն եզրեր, որոնց վրայից աշտարակի պահապանները դիտում էին ոչ մեծ պատուհանների միջով։

Պաշտպանական կառուցվածքների բաղկացուցիչ մասը կազմող այս աշտարակի կառուցման ժամանակ էլ օգտագործված է նույն շինարարական տեխնիկան, ինչ նշվեց վերևում։ Շարվածքը բազալտ քարերից է, կրաշաղախով։ Այստեղ նույնպես կիրառված են փայտե գոտիներ, որոնց արտաքին ու ներքին շորսու գերանները կապված են միմյանց հետ լայնական շորսուներով։

Վերը նկարագրված աշտարակը ծառայում էր արտաքին աշխարհի հետ հաղորդակցելուն և պաշարման դեպքում ամրոցը խմելու ջրով ապահովելուն (ըստ տեղացիների, աշտարակի ներսում եղել է աղբյուր)։

4. ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Կամուրջներ[11]։ XII—XIII դարերում, երբ Զաքարյանների օրոք Լոռէ քաղաքը ապրել է իր երկրորդ (և, հավանական է, առավել նշանավոր) ծաղկումը, նրա տերիտորիան ընդարձակվել է ի հաշիվ հարևան դաշտավայրերի, որոնք անջատված են բերդից ու «Աղ-Շահարից» խորախոր կիրճերով։ Ահա այդ նոր տարածքների հետ հարմարավետ կապ ստեղծելու համար էլ ծագել է այդ կիրճերում կամուրջներ կառուցելու անհրաժեշտությունը։

Ներկայումս Միսխանա գետակի վրա պահպանվել է մի ամբողջական կամարավոր կամուրջ, իսկ Զորագետի ձախ ափին՝ մի այլ կամուրջի հենարանը։ Էպիգրաֆիկական տվյալներից[12] ու պահպանված մնացորդներից դատելով

11 Ստորև բերվող կամուրջները հրատարակված են հեղինակի «Միջնադարյան Հայաստանի բարավանատներն ու կամուրջները» աշխատությունում, Երևան, 1960, էջ 93—96։

12 Ս. Ջալալյանցը (հ. I, 124) բերում է Կուրթան գյուղի մոտ գտնված և 1240 թ. վերաբերող մի արձանագրություն կամրջի շինարարության մասին, որում ասվում է. «Ես... Գեորգս, որդի Բանաւորի նոր շինեցի զկամուրջս և կանգնեցի զխաչս։

այդպիսի կամուրջներ[13] եղել են ավելի շատ։ Յավոք, այդ կամուրջների մասին չեն պահպանվել գրավոր տեղեկություններ, որոնք, թերևս, օգնեին որոշելու նրանց կառուցման տարեթվերը։

Միսխանա գետի կամուրջը կառուցված է բացառիկ հարմար ընտրված տեղում։ Ժայռի երկու խոշոր զանգվածները, որ կանգնած են գետակի երկու ափերին՝ իրարից մոտ 9 մ հեռավորությամբ, կամուրջի համար աներեր հիմքեր են ծառայում։ Կամուրջի կառուցվածքը իրականացված է բազալտե սրբատաշ քարերից, կապակցված կրաշաղախով։ Թաղի ու ճակատային պատերի շարվածքը կատարված է խնամքով ու որակով։ Հարմար տեղանքի ու կառուցման բարձր որակի շնորհիվ էլ կամուրջը կանգուն է մնացել ու այսօր էլ շարունակում է ծառայել իր նպատակին։



Նկ. 5. Կամուրջ Միսխանա գետի վրա

Կամուրջի ճակատային պատերը տեղ-տեղ պահպանվել են։ Ինչպես պատմում էին տեղի բնակիչները, 1918 թ. հորդառատ անձրևներից հետո գետակի ջրի մակարդակը բարձրացել է և հեղեղի հզոր հորձանքը, որ լցրել էր կամարի ամբողջ բացվածքը, լվացել-տարել է կամարի աջ ու ձախափնյա ճակատային պատերը։ Ջրի հզոր հորձանքներին դիմակայել է միայն թաղը։ Հետագայում ճակատային պատերի քանդված մասերը վերականգնել են ճեղքված բազալտի քարերով, չոր շարվածքով։

Սլաքաձև թաղի թռիչքը կազմում է 8,5 մ, սլաքը՝ 3,8 մ, իսկ կամուրջի լայնությունը՝ 2,8 մ։ Թաղի երևսային կողմը (կամարը) կազմված է 0,4—0,45 մ լայնությամբ երկու համակենտրոն շարքից, ընդ որում երկրորդ շարքը առաջինի համեմատ առաջ է գալիս 0,1 մ, կառուցվածքի հաստության մեջ յուրատեսակ խոր ու հարթ կամարաղեղ ստեղծելով։

Վերը նկարագրված կամուրջից մոտավորապես 250—300 մ հեռավորության վրա, քիչ վերև այն տեղից, ուր Միսխանան թափվում է Զորագետը, պահպանվել են երկրորդ ու, անկասկած, իր չափերով շատ ավելի մեծ, երկ-

[13] Ստեփանավանի շրջանի հուշարձանների պահպանության հսկիչ Հ. Մանուկյանի տվյալներով Միսխանայի կիրճում կան 6, իսկ Զորագետի կիրճում՝ 3 կամուրջների մնացորդներ։ Հավանաբար նրանք կառուցված են եղել տարբեր ժամանակներում։

թռիչք կամուրջի մնացորդները։ Պահպանված է միայն միջին հենարանը, իսկ աջ ու ձախափնյա խելերից հետք չի մնացել, նրանք վաղուց քանդված ու ողողված են հիմնահատակ։ Ժամանակի ընթացքում գետի հունի տեսական փոփոխությունների, կառուցման տեղի ոչ այնքան հաջող ընտրության պատճառով ողողման ենթակա, ոչ կայուն հիմնատակերի վրա կառուցված հիմքերը բանդվել են։

Պահպանված միջին հենարանը երեսապատված է լավ մշակված բազալտ բարերով, որոնք նույնպես շարված են կրաշաղախով։ Ներսում այն լցված է նույն ապարի կտորտանքներից պատրաստած կրարետոնով։

Հենարանը իրենից ներկայացնում է ուղղանկյուն մի կառուցվածք (չափերը՝ 4,6×3,35 մ), ջրի հոսանքին հակառակ ուղղված սրածայր վերջավորությամբ։ Ամեն մի թեք կողմի երկարությունն է 3,4 մ։ Դեպի Միսխանայի կիրճն ուղղված թեք կողմի վրա պատկերված է առյուծի մի բարձրաքանդակ։ Երկու երկարավուն կողմերի վրա առաջ են գալիս զարդագոտիներ։ Ակնհայտ է, որ նրանք շինարարության պրոցեսում ծառայել են իբրև փայտյա ողնարկների հենարաններ։ Դատելով հենարանի երկարությունից, կամուրջի լայնությունը կազմել է 4,5—4,6 մ։

Նկ. 6. Բարձրաքանդակ Զորագետի կամրջի վրա

Բաղնիքներ։ Լոռէ բերդի տերիտորիայի վրա իր ժամանակին կառուցված է եղել երկու բաղնիք՝ մեծ և փոքր[14]։ Սրանցից առաջինը կիսաքանդ վիճակում է ու գտնվում է բերդի դոներից ոչ հեռու, իսկ երկրորդ ավելի ավերվածը, գտնվում է Զորագետի կիրճի եզրին[15]։ Սրանց կառուցման թվականը ստուգորեն որոշելը դժվար է։ Ընդունված է դրանք վերագրել Լոռէի ծաղկման ժամանակներին, այսինքն՝ XI—XIII դդ., երբ քաղաքի մեծ թվով բնակիչների պահանջը չէր կարող բավարարվել միայն մեկ բաղնիքով։ Այսպիսի թվագրությունը ընդունելի է նաև հիշյալ շենքերի հատակագծային-շինարարական առանձնահատկությունների տեսակետից, որպիսիք ի հայտ են գալիս միջնադարյան Հայաստանի մյուս բաղնիքների կառուցողական սկզբունքների ընդհանրական գծերի համեմատությամբ։

Մեծ բաղնիքը բաղկացած է եղել երեք հիմնական մասերից՝ ջեռուցարանից, լողասրահից ու հանդերձարանից, որոնք դասավորված են արևելքից արևմուտք՝ միմյանց զուգահեռ։ Ավելի ուշ, ըստ երևույթին լողասրահի տարողությունը մեծացնելու նպատակով, նրա մակերեսը ընդարձակվել է հանդերձարանի հաշվին։ Դրա հետևանքով հարավային կողմից կառուցվել է նոր հանդերձարան՝ համեմատաբար ավելի մեծ մակերեսով[16]։

[14] Հ. Խալփախչյանը (տե՛ս նշվ. աշխ., էջ 216) բերդի տերիտորիայում բաղնիքների թիվը սխալմամբ նշում է 3։

[15] Նույն տեղում (տե՛ս էջ 224), փոքր բաղնիքի տեսք. թյուրիմացության հետևանքով, նշված է Միսխանայի կիրճի եզրին։

[16] Հ. Խալփախչյանի կարծիքով այս նոր մասը ծառայել է որպես հանգստի սենյակ։

Ջևռուցարանը ներկայացնում է թաղածածկ, ոչ մեծ մակերես ունեցող (4,1×1,6 մ) մի սենյակ, որը հիմա կիսաքանդ է։ Նրա հատակի նիշը կես մետրով բարձր է լողասրահի հատակից։ Լողասրահի մի ծայրին տեղավորված էր ստոր ջրի ավազանը, որի պատերն ու հատակը թանձր ու խնամքով սվաղ-



Նկ. 7. Մեծ բաղնիք. հատակագիծ և կտրվածք

ված են ջրանթափանց կրային շաղախով։ Այստեղ տեղավորված էր նաև մի կաթսա (սովորաբար՝ մետաղե, պղնձյա), ջուրը տաքացնելու համար, որը հիմա չի պահպանվել։ Թե ինչպե՞ս էր ջուրը մղվում ստոր ջրի ավազանը, և ապա կաթսան, ջրամատակարարման կավե խողովակներով, թե՞ ձեռքով լցնելու միջոցով, առանց պեղումների դժվար է ստույգ ասել, սակայն պարզ է, որ ինչպես ստոր, այնպես էլ տաք ջուրը կավե խողովակներով (d=5 սմ) ինքնահոսով

մտնում էր լողասրահը։ Խողովակները տեղավորված էին պատի մեջ (հատակից 0,9 մ բարձր) իրար վրա ու միմյանց զուգահեռ։ Ներկայումս, իրենց բներում փշրված կավե խողովակների հետքերով կարելի է որոշել, որ ջրածորակների երեք խմբերն էլ գտնվել են լողասրահի երկրորդ մասում, մեկը հարավային պատի մեջտեղում, մյուսը՝ հյուսիսային, իսկ երրորդը՝ արևելյան։ Քանի որ վերջինիս երկու կողմից էլ եղել են բացվածքներ, որոնցով լողասրահի երկու մասերը հաղորդակցվում էին իրար հետ, խողովակները ջեռուցարանից այստեղ են բերվել ոչ բարձր ու փոքր թեք պատի վրայով (հատակագծում ցույց է տրված գծիկներով)։



Նկ. 8. Բաղնիքի բաբև տաշտը

Նկ. 9. Մեծ բաղնիքի ավերակները

Ջրածորակների տակ դրված են եղել բարև մեծ տաշտեր, որտեղից և վերցրել են ջուրը լողանալու համար։ Հիմա մեծ բաղնիքի ավերակների մոտ ընկած են երկու մեծ տաշտ, կերտված բազալտի մեծ զանգվածներից։ Նրանցից մեկը, որ պատկանելիս է եղել մեծ բաղնիքին, համեմատարար փոքր է (չափերը՝ 1,22×0,9 մ), անկյունում ունի մի անցք՝ ջուրը թափելու համար։ Մյուս տաշտը մեծ է առաջինից (չափերը՝ 1,55×0,95 մ) և պատկանել է փոքր բաղնիքին։ Սա երկար տարիներ օգտագործվում էր Լոռիբերդ գյուղի կոլտնտեսության դարբնոցում ու վերջերս միայն հետ է բերվել իր տեղը։

Ջեռուցարանի հետ կապ պահպանելու (կամ, ինչպես ենթադրում է Հ. Խալփախչյանը՝ կաթսայից ջուր վերցնելու) համար ջեռուցարանը լողասրահից բաժանող պատի մեջ թողնված է մի ուղղանկյուն ոչ մեծ բացվածք։

Լողասրահը (41,5 մ² ընդհանուր մակերեսով) ծածկելու համար այն մի լայնական պատով բաժանված է երկու անհավասար (17,5 մ² և 24,0 մ²) մասի։ Նրանցից ամեն մեկը ծածկվում է գմբեթների ու թաղերի ինքնուրույն սիստեմներով։ Այն մասը, որ հարակից է ջեռուցարանին, ծածկված է երկու փոքր գմբեթով ու նրանց միջև ընկած մի թաղով, իսկ մյուսը ծածկված է եղել մեջտեղից՝ գմբեթով, իսկ կողքերից՝ թաղերով։ Գմբեթները կառուցված են սֆերիկ առագաստների վրա, առանց թմբուկների։ Լողասրահի լուսավորությունն ու օդափոխությունը իրականացվում էին գմբեթների մեջ թողնված անցքերով։

Արևելյան պատի մեջ թողնված մեծ բացվածքի (լայնությունը՝ 2 մ) միջոցով լողասրահը կապվում էր իրեն կից հանդերձարանի հետ։ Նույն պատի մեջ, նշված բացվածքի երկու կողմերում, կառուցված են ծխնելույզներ։ Սրանցով հեռանում էին այն գազերն ու ծուխը, որոնք ջեռուցարանից մղվում էին լողասրահի հատակի տակ, այն տաքացնելու համար։ Հանդերձարանը, որը, ինչպես ենթադրվում է, հետագայում դարձել է լողարանի մի մասը; գրեթե չի պահպանվել։ Գետնի վրա հատկով նշմարվող նրա մնացորդները կարող են հայտնաբերվել միայն պեղումների միջոցով։ Սրանք, ինչպես և լողասրահի նշված մասերը, ծածկված են եղել թաղով ու գմբեթով։ Շատ վատ պահպանված լինելու հետևանքով, դժվար է որոշակի բան ասել հետագայում հարավային կողմից լողասրահին կցած սենյակի ծածկի կառուցվածքի մասին։ Իր մակերեսով (40 մ²) գրեթե հավասար լողասրահին, այդ սրահն, անտարակույս, հաղորդակցվում էր նախկին հանդերձարանի հետ։ Հիմա այն լրիվ ավերակ է։ Պարագծով տեղ-տեղ միայն պահպանվել են պատի մնացորդները։

Բաղնիքի շենքը, նրա առանձին տարածությունները ծածկող թաղերն ու գմբեթները, ինչպես և ծխնելույզները շարված են բազալտի կոպտատաշ բեկորով, կրաշաղախով։ Ներսից պատերը, թաղերը, գմբեթները սվաղված են բարդ շաղախի սվաղով (կիր, գաջ, ավազ)։

Փոքր բաղնիքը, որ կառուցված է Զորագետի կիրճի եզրին, իր տեղադրումով, մյուսի համեմատ, ապահովված էր շահագործման ավելի լավ պայմաններով, քանի որ այստեղ ավելի դյուրին էին լուծվում ջրամատակարարման ու օգտագործված ջրի հեռացման (գետի կիրճը) հարցերը։ Այդ նպատակով նրանից մոտ 30 մ հեռու, գետի հյուսիս ու նիշով բարձր կառուցված էր մի ջրամբար՝ զգալի ջրատարողությամբ (նրա երկարությունն է 15,5 մ և լայնությունը՝ 13,3 մ, իսկ ներկայումս հողով լցված խորությունը, դատելով կիրճի կողմից սահմանապատող պատի բարձրությունից, կազմել է ոչ պակաս, քան 2 մ)։ Ակներև է, որ ջրամբարը կառուցվել է ջրի մշտական պաշար ունենալու նպատակով՝ առանձնապես բերդի պաշարման ժամանակ։ Ջուրը այստեղ բերվել է քաղաքի ջրամատակարարման գծով։ Ջրամբարը լցվելուց հետո ավելորդ ջուրը դուրս էր թափվում կիրճը՝ կավե խողովակներից պատրաստած այն անցքերով, որ գտնվում են ջրամբարի արևմտյան՝ անմիջապես գահիթափի եզրին կառուցված պատի մեջ։ Ջրամբարի պատերը, նկատի ունենալով ջրի ճնշման զգալի ուժը, հաշված են իրրև հենապատեր։ Դրանով պիտի բացատրել նրանց բավականաչափ մեծ հաստությունը (1,7—2,3 մ)։ Կուտակված ջուրը օգտագործվում էր բաղնիքի ամենօրյա կարիքների համար։ Շնորհիվ ավազանի ու բաղնիքի նիշերի տարբերության, ջուրն ինքնահոսով էր գալիս բաղնիքի կողմը (նկատելի է կավե խողովակների մի մասը, որ հատում է պատը 45°-ի տակ)։

Փոքր բաղնիքն էլ մեծի նման բաղկացած էր երեք հիմնական մասից՝ ջեռուցարանից, լողասրահից ու հանդերձարանից։ Սակայն նրա հատակագիծը, տեղանքի պայմաններին համեմատ, քիչ այլ է։ Եթե մեծ բաղնիքում բոլոր երեք մասն էլ մի առանցքի վրա իրար ընդհուպ կպած են, ապա փոքրում ջեռուցարանն ու լողասրահը դասավորված են այնպես, որ վերջինը գտնվելով արևմուտյան կողմում, իր պատով ուղղակի կախված էր անդունդի վրա։ Դրա համար էլ հանդերձարանը ստիպված են եղել տեղավորել լողասրահի հարավային կողմում, նույնպես անդունդի եզրին։

Համեմատաբար լավ պահպանված ու մակերևույթով փոքր (2,0×3,7 մ²) ջեռուցարանը կառուցված է ոչ բարձր մի ժայռի տակ, որի դուրս եկած մասը կառուցողին ստիպել է թեքել նրա արևելյան պատը։ Այն ծածկված է թաղով, որի կատարին լույսի համար թողնված է մի անցք։ Պատերը (ներսից) և հատակի պահպանված մասը (բարձրացված հենարանների վրա) խնամքով սվաղված են կրաշաղախով։ Հյուսիս-արևմտյան անկյունում թողնված է ծրխնելույզ, կառուցված ոչ թե կավե խողովակներից, այլ փոքրիկ բարերից իրականացված շարվածքով։ Հատակագրծում քառակուսի (6,7×6,5 մ²) լողասրահը հավանաբար ծածկված էր գմբեթով, որը լուսավորության ու օդափոխության համար ուներ այնպիսի անցքեր, ինչպիսիք ունեցել է մեծ բաղնիքի գմբեթը։



Նկ. 10. Փոքր բաղնիք. հատակագիծ և կտրվածք

«Քաղաքացիական շենքը»։ Բերդի տերիտորիայի կենտրոնում, բերդապատին մոտ, միայնակ կանգնած է մի շենք, որն ըստ սովորության անվանվում է «քաղաքացիական»։ Այս կարծիքը արմատացել է մասամբ որպես հետևանք այն բանի, որ որոշ հեղինակներ (Ի. Հարությունյան, Ս. Էփրիկյան) XIX դ. վերջին և XX դ. սկզբում նկարագրելով Լոռիբերդն ու իր հուշարձանները, հայտնել են այն միտքը, թե այդ շենքը սկզբում եղել է ինչ-որ հասարակական շենք, որը հետո հարմարեցվել է մզկիթի, իսկ ավելի ուշ՝ եկեղեցու։ Որ իսկապես նա ծառայել է իբրև մզկիթ, անվիճելի է։ Որպես ապացույց կարող է ծառայել հարավային պատի մեջ սարքված մեհրաբը (աղոթախորշը), որի քարե մեծ սալի եզրերից հետագայում քերված են դարդաքանդակները։

Շենքի հատակագիծը ուղղանկյուն է (6,5×11,8 մ ներքին չափերով)։ Սրա երկայնական առանցքով (արևելք-արևմուտք ուղղությամբ) կանգնեցված են միակտուր բազալտ քարերից կերտված երկու սյուներ։ Սյուների այդպիսի դասավորության հետևանքով դահլիճի ամբողջ տարածությունը բաժանվում է վեց փոքր ուղղանկյունիների (3,5—3,7×3,05 չափերի), որոնցից յուրաքանչյուրը ծածկվում է ինքնուրույն՝ սֆերիկ առագաստների վրա հենվող գմբեթներով։

Եկեղեցի դառնալուց հետո (երևի XVIII կամ XIX դդ.) շենքը մասամբ հարմարեցվում է այդ նպատակին· ներսում, հարավ-արևելյան անկյունում, կառուցվել է տեսքով ու չափերով աննշան մի սեղան, արևելյան պատի մեջ բաց է արված մի լուսամուտ, հյուսիս-արևելյան դռան բացվածքի մեջ հարմարեցված է մկրտության մի ավազան, իսկ դրսից կցակառուցել են թաղածածկ մի սրահ երեք բաժանմունքով, որոնցից միջինը ծառայում էր իբրև նախամուտք, իսկ երկու կողքերինը՝ որպես եկեղեցու խորաններ։

Ինչպիսի՞ այլ նպատակների է ծառայել այս շինությունը մինչև պաշտամունքի համար օգտագործելը, կամ ընդհանրապես եղե՞լ է արդյոք նրա պատմության մեջ մի այլ շրջան՝ դժվար է ասել։ Ալինջա-շայ գետի մոտ (Ադրբեջա-





Նկ. 11. «Քաղաքացիական» շենք. հատակագիծ և կտրվածք

նական ՍՍՌ) գտնվող խանեգայի մզկիթի հետ բաղդատելով, հատակագծային-ծավալային կոմպոզիցիայի տեսակետից[17] այս երկուսի միջև կարելի է

[17] Տե՛ս М. А. Усейнов, Памятники Азербайджанского зодчества, М., 1950, էջ 55—57։

գտնել որոշակի նմանություն, որը և իրավունք է տալիս մեզ ենթադրելու, որ «քաղաքացիական» կոչված այս շենքը մի որևէ թուրքական ցեղի տիրապետության ժամանակ (XIV կամ XV դդ.) ենթարկվել է վերաշինության։ Հօդուտ այսպիսի ենթադրության կարող են վկայել մի շարք ուրիշ փաստեր (կառուցման ժամանակ միջնադարյան շենքերի առանձին բեկորների ու խաչքարերի օգտագործումը, ծածկի յուրօրինակ գմբեթային կոնստրուկցիան և քարերի հայկական ճարտարապետության համար ոչ բնորոշ «արկղաձև» շարվածքը, որը հանդիպում է Դերբենդի պաշտպանական պատերում և այլն)։

Այն հանգամանքը, որ գմբեթների հիմքերը ոչ թե մարուր քառակուսիներ են, այլ ուղղանկյուններ, որոնք ավելի քիչ են հարմար գմբեթային ծածկի համար, կարող է մասամբ ապացույց համարվել շենքի ծածկի հիմնովին վերակառուցման, երբ այն հարմարեցրել են մզկիթի։ Ենթաթաղային վեց կամարների միջոցով գմբեթների ծանրությունը փոխանցվում են հենարաններին։ Յուրաքանչյուր սյան վրա դցված են չորս այդպիսի կամարներ, որոնք պատերի մոտ հենվում են պատերից դուրս եկած պահունակների վրա։ Վեց պահունակներից չորսը անկյունային են (ընդ որում միայն մի անկյունով), իսկ երկուսը՝ շարքային։ Այս հանգամանքը մեզ համոզում է, որ պահունակների համար օգտագործված են քիվի քարեր (նրանցից չորսը անկյունային քիվեր), որոնք վերցված են մի ինչ-որ միջնադարյան շենքից։ Նրանցից մեկի վրա հայկական տառերով արձանագրություն կա։ Սկզբում շենքը ունեցել է հինգ մուտք՝ երեքը հյուսիսային և երկուսը հարավային. նրանք բոլորը, բացի հյուսիսային միջինից, հիմա փակված են։ Դռների բացվածքները ծածկվել են փայտե հեծաններով, որոնք փտել են և այժմ մնացել են միայն նրանց բները։

Նկ. 12. «Քաղաքացիական» շենք. ներքին տեսք

Կոնստրուկտիվ տեսակետից շենքի բոլոր պատասխանատու մասերը (ենթաթաղային կամարները, սյուները, պահունակները, որմնախարիսխն ու պատերը, բացառությամբ վերջիններիս արտաքին երեսապատման) իրականացված են բազալտե մաքուր տաշված քարերով։ Ներսի պատերը շարված են բազալտե անկանոն ձևի քարերից։ Արտաքին պատերի երեսապատման ու գմբեթների համար օգտագործված է դեղնանարնջագույն երանգի ֆելզիտային տուֆը, որի շնորհիվ էլ շենքը, բերդի տերիտորիայի վրա, շահում է իր տեսքով։ Գմբեթները շարված են տափակ, փոքր ու կանոնավոր ձևի կտրած (ադյուսի նման) քարի կտորներով։ Արտաքին երեսապատումը իրականացված է սրբատաշ քարերով, որ շարված են հորիզոնական ու բարձրությամբ մոտավորապես իրար հավասար շարքերով։ Որմնախարսխից 4 մ բարձրության վրա պատերն ամբողջ պարագծով երիզվում են ոչ բարդ տրամատի մի քիվով, որից վերև,

ինչպես կողքի պատերում, այնպես էլ երկայնականներում, թողված է 1—2 շարք «արկղաձև» շարվածք։ Կողքի պատերի վրա պահպանված ճակատոնների մնացորդներից կարելի է եզրակացնել, որ բոլոր վեց գմբեթները ծածկված են եղել մի ընդհանուր երկթեք տանիքի տակ, որն այժմ չի պահպանվել։ Մասամբ փլված են նաև միջին երկու գմբեթները։ Լավ պահպանված գմբեթների կատարին չկան բացվածքներ լույսի համար։



Նկ. 13. «Քաղաքացիական» շենք. արտաքին տեսք

Նկարագրված այս շենքը հանդիսանում է փիլ թէ շատ ամբողջական պահպանվածը բերդում։

* * *

Քաղաքաշինական կուլտուրայի մակարդակի տեսակետից ընդհանուր գծերով ահա այսպես է ներկայանում միջնադարյան Հայաստանի քաղաքներից մեկը՝ Լոռէն, որտեղ կյանքն ընդհատվել է դարեր առաջ։

Հնագիտական հետազոտության և ուշադրության կարոտ այս քաղաքատեղին պահպանված իր կառուցվածքների ու նրանց մնացորդների օգնությամբ թույլ է տալիս նախնական կարծիք հայտնելու այն մասին, որ Լոռէն հանդես է բերում որոշակի գծեր (տեղանքի նպատակահարմար ընտրություն, հատակագծային եռամաս կառուցվածք՝ բաղկացած միջնաբերդից, շահաստանից և բնակելի արվարձաններից, պաշտպանական կառուցվածքների սիստեմ, ջրամատակարարման և կոմունալ տնտեսության պատշաճ մակարդակ և այլն), որոնք բնորոշ էին Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի քաղաքներին ընդհանրապես և բերդաքաղաքներին՝ մասնավորապես։

ГОРОДИЩЕ ЛОРИ-БЕРД

Из истории градостроительства средневековой Армении

В. М. АРУТЮНЯН
Заслуженный деятель искусств Арм. ССР.

(Резюме)

В период правления основателя Ташир-Дзорагетского царства Давида Анохина (989—1048 гг.) в центре области Гугарк была построена крепость Лорэ, или Лори-берд, куда из Самшульде перешла столица этого царства. Наибольший расцвет ее, когда были осуществлены основные градостроительные мероприятия, относится к XI—XIII вв.

Городище Лори-берд находится в нынешнем Степанаванском районе Армянской ССР, на горном плато треугольной формы, окруженном глубокими ущельями рек Мисхана и Дзорагет. Удачный выбор местности для строительства предопределил высокие оборонные качества города. В средние века Лори-берд славился своей исключительной неприступностью.

Как типично феодальный город-крепость, Лорэ характеризуется трехчастной планировочной структурой; он состоял из крепости, шахастана (называемого «ах-шахар»-ом») и жилых пригородов, которые не только находились на непосредственно примыкающих к городу территориях, но и располагались на соседних плоскогорьях (как, например, пригороды Амракиц и Кендагех), отделенных от городской территории ущельями рек Мисхана и Дзорагет. Мосты, перекинутые через названные реки, служили средством связи между пригородами. Общая площадь города вместе с последними составляла свыше 100 га. При густой застройке, характерной для средневековых городов, Лорэ мог быть заселен 8—10 тысячами жителей.

Крепость располагалась на остроконечном завершении горного плато, занимая площадь 9 га, и была надежно защищена неоднократно усиливавшейся и поныне частично сохранившейся оборонительной стеной (длина 214 м), в которой открывались единственные ворота. Толщина ее местами доходит до 20 м. С внешней стороны оборонительных стен был вырыт ров, в военное время наполнявшийся водой.

Территория шахастана, площадью 25 га, простиралась за чертой указанной выше оборонительной линии. Со стороны примыкавшего к ней плоскогорья она ограничивалась второй оборонительной стеной (длина 440 м), находящейся на расстоянии 700 м от первой. От нее сохранились только следы.

Кроме двух основных линий оборонительных стен, в окружавших крепость ущельях, в местах, доступных для проникновения неприятеля, были возведены дополнительные защитные стены. Для связи с внешним миром и снабжения водой во время осады крепость располагала специальным потайным ходом, конец которого оборонялся башней, сооруженной в ущелье реки Мисхана.

Весь комплекс фортификационных средств был подчинен основной идее — обеспечению высоких оборонительных качеств крепости, что явля-

лось одной из главных задач при строительстве средневековых городов-крепостей. Этой идее подчинялась также система водоснабжения: город обеспечивался водой, протекавшей через территорию «ах-шахар»-а по крытому арыку, ею же наполнялся крепостной ров, бассейн для запаса воды (последняя в мирное время использовалась для нужд малой бани крепости).

На территории Лори-берда сохранились развалины и остатки многих средневековых памятников архитектуры: оборонительных стен, мостов, бань, гражданского здания, церкви, часовни и т. д.